



ԻՍՄԱՅԵԼ ՓԱՇԱ ՓՈԽԱՐՔԱՅ ԵԳԻՊՏՈՍԻ

Իսմայել փաշա, որդի իպրահիմ փաշայի, որ մեռաւ յամին 1848, ծնաւ 1816ին և յաջորդեց իր հօրեղբօր Ռայտի փաշային յամին 1863 յունուար 18 :

Իր նախորդն լուսամիտ անձ մ'ըլլաւով, բացաւ Եգիպտոսի գոները արևմտեան քաղաքականութեան առջին, փոյթ տանելով մասնաւորապէս ծաղկեցնելու զձեռագործ արուեստս և զվաճառականութիւն, և սիրելի ըն-

ծայեց ինք զինքր ամենուն՝ մեծահոգի առատաձեռնութեամբ ու մարդասէր բնաւորութեամբ։ Սակայն այժմեան փոխարքային համար Կ'ըսեն թէ աւելի նմանութիւն կը ցուցընէ իր պապուն, սրամիտ ու խորագէտ Մէհմէտ Ալի ալ պանեցւոյն, որ թէպէտ շատ հաւան ու հակամէտ չէր եւրոպական քաղաքականութեան, սակայն կը պաշտպանէր զայն իր շահուն համար։

Իսմայել փաշա իր նրբատես քաղա-

քագէտ հանճարովը կրնայ մրցիլ եւրո-
պիոյ մեծանուն հնացեալ քաղաքագի-
տաց հետ , իսկ վաճառականական շա-
հագիտութեան մասին կրնայ իրաւցնէ
օրինակ ըլլալ ամենուն . Պապուն աւան-
դութիւններէն սորված է ամեն բանի
մէջ մենավաճառ ըլլալ , և հօրենա-
կան իրբե առանձին ստացուածք ընդ-
արձակ արդասարեր կալուածներ ու-
նենալուն , ինքը կը կանոնադրէ տե-
ղափոխութեանց կերպը , սակարկու-
թիւնը ու գինը , որով ոչինչ կամ քիչ
բան կը մնայ հպատակացը . անոր հա-
մար հողագործաց վիճակն շատ խեղճ
է յեգիպտոս . բայց խոստովանելու է
դարձեալ որ ժողովուրդն է մասսամք
մ'իր թշուառութեան պատճառը . վասն
զի նոր ու օգտակար փոփոխութեանց
դէմ կը զնէ , և ամենեին չուզեր խո-
տղիլ իր նախնեաց սովորութենէն :

Եգիպտոս այս մէկ քանի վերջին տա-
րիներուս մէջ շատ յառաջադիմեց 'ի վա-
ճառականութեան և 'ի ձեռագործ ա-
րուեստ : Երկաթուղիք ու հեռագիրք
կենդանացուցին իրենց երջանկարեր
թելերովն ու գիծերով այդ երկարժա-
մանակեայ մեռեալ բնութիւնը ու եր-
կիրը . նեղոս 'ի բազում կողմանս կա-
մուրջներով ու շոգենաւներով ընդ մէջ
կտրեցաւ . գլխաւոր քաղաքներն՝ Ալեք-
սանդրիա ու Գահիրէ օր ըստ օրէ միշտ
աւելի ծաղկեցան ու զարգացան , և Ախ-
էզի ջրանցը ը շատ մ' անհրաշան գեղեր
ու աւաններ կերպարանափոխեց 'ի
քաղաքս և ուրիշ նորեր կանգնել ար-
ւաւ . Ա'վ է այս ամեն բաներն 'ի զլուխ
տանողը . իսմայէլ վաշային ու իր պաշ-
տօնէից անյոդողդ ու աննըկուն գոր-
ծունէութիւնը :

Իսմայէլ վաշային ուրիշ շահաւէտ
ձեռնարկութեան մ'ալ ձեռք զարկաւ
ու կատարեց . այն է Սամուէլ Ոէյքըրի
առաջնորդութեամբ ընել տուած զի-
նուորական արշաւանքն 'ի վերին նե-
ղոս , որուն պատմութիւնն աւանդե-
ցինք մեր ընթերցողաց 'ի Պրակիս , յո-
րում վաճառականական օգուտ մը կը
դիտէր փոխարքայն :

Իսմայէլ վաշային միջահասակ է ,
կարմրամօրուս և կարմրահեր . իսկ աչ-
քերը փոքր են և երկնագոյն : Շատ
մարդասէր ու քաղաքավար է առ օ-
տարս , զորս կ'ընդունի քայլցրութեամբ
ու վայելցութեամբ : Միշտ հետամուտ
եղած է անկախ ըլլալ 'ի Բ . Դրանէ .
ուսկից շատ արտօնութիւններ ընդու-
նած է , որոնք մերժուած էին իր նա-
խորդացը : Օսմանեան պետութիւնը
չնորհեց իսմայէլին ընտանեացը իրա-
ւունք ուղիղ յաջորդութեան , խետիվ
տիտղոսը և բարձրորդիշն պատուա-
նունը : Բայց նա այսչափով գոհ չըլ-
լալով , փորձեց իրաւունք ունենալ ա-
ռանց զիտութեան կամ ժողովուու-
թեան օսմանեան պետութեան փո-
խառութիւններ ընել , և ըստ կամաց
նսւագել և առաւելուլ ծովային ու ցա-
մաքային զինուորութիւնը :

Իսմայէլ վաշային որդին ժառանգ
իշխանն , որ հիմա քսան և մի ամեայ
պիտի ըլլայ , կատարած է իր ուսման
ընթացքը յերրովա , և կրթուած ըստ
եւրոպական քաղաքակրթութեան , որ
մեծ յոյս կու տայ և կրնայ արժանաւոր
յաջորդ մ' ըլլալ իր հօրը : Բարձրախտ
է Եգիպտոս որ ունի այսպիսի իշխան-
ներ , որոց նպատակն է յառաջադիմու-
թիւն ու երջանկութիւն իրենց հպա-
տակացը :

Փ Ա Ք Ր Ա Վ Ի Ռ Յ Ս Ո Վ Ը

Դմբախտաբար գրեթէ տարի չան-
ցիր որ աշխարհիս այս կամ այն կող-
մը թշուառութիւն մը չպատահէր . կամ
պատերազմ պիտի ըլլայ կամ ժանտա-
մահ , և կամ քոյեռա , որոնք իրարմէ
աւելի ահաւոր են . բայց ահաւորագոյն
ևս է տարրոյս ճակատազրեալ այցե-
լուն՝ սովը , այն մարդածախ թշնամին
որով կը տառապին Անդղիսկան Հընդ-
կաստան և Փոքր Ասիա : Գէթ երջանիկ
է Հնդկաստան , եթէ կրնայ ըլլալ ա-